ԹԵՄԱ 5

ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

ԴԱՍ 5.1 Աշխարհի քաղաքական բաժանումը (հնագույն ժամանակներից մինչև XX դարի սկիզբը)

1. Մինչև Աշխարհագրական մեծ հայտնագործություններն աշխարհի քաղաքական և էթնիկական բաժանարար գծեր էին անապատները, ծովերը, դժվարանցանելի լեռները, խոշոր գետերը: Դրանք խանգարող հանգամանք են եղել ժողովուրդների շփման, մերձեցման ճանապարհին:

Հետագայում ծովային հաղորդակցության տեխնիկական ավելի բարձր մակարդակի շնորհիվ ծովերն ու օվկիանոսները ոչ թե բաժանել, այլ միավորել են ժողովուրդներին, և մարդկության պատմության վերջին հինգ հարյուր տարին, կարելի է ասել, դարձել է մշակույթների և քաղաքակրթությունների շփման, մերձեցման և ինտեգրման պատմություն:

2.

Տիգրան Մեծի տերությունը
Ք. ա. 69 թ. կացությամբ

3. Դարաշրջանի վերջում սկսում են ձևավորվել ներքին և արտաքին շուկաները, հզոր պետությունները ձեռք են բերում նոր տարածքներ հայտնաբերելու և դրանք գաղութացնելու հնարավորություն, ակտիվանում է առևտուրը, ուժեղանում են միջազգային կապերը: Ավարտվում է Եվրոպայի, Հարավարևմտյան և Հարավարևելյան Ասիայի բաժանումը պետությունների միջև: Ժամանակի մեծ պետություններն էին Բյուզանդիան, Արաբական խալիֆայությունը, Կիևյան Ռուսիան, Ոսկե հորդան, Մոնղոլական և Օսմանյան կայսրությունները, Չինաստանը, ռազմական հզորացում էին ապրում Պորտուգալիան, Իսպանիան, Անգլիան:

4. Ավելի ուշ հայտնագործվեցին Ավստրալիան (Վ. Յանսզոն, Ջեյմս Կուկ), Տասմանիան: Պորտուգալիան և Իսպանիան դարձան խոշորագույն գաղութային տերություններ: Մանուֆակտուրային արտադրության (ձեռքի աշխատանքը փոխարինվեց մեքենայական աշխատանքով) զարգացման շնորհիվ ասպարեզում հայտնվեցին նաև Անգլիան, Ֆրանսիան, Հոլանդիան, Գերմանիան, ավելի ուշ՝ ԱՄՆ-ը:

XVIII դարի վերջին արդեն ողջ Արևմտյան կիսագունդը, Ավստրալիան, Հարավային և Հարավարևելյան Ասիան, Հարավային Աֆրիկան հայտնագործված և բաժանված էին եվրոպական մի քանի պետությունների՝ Անգլիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Հոլանդիայի միջև: Ըստ էության ավարտվում էր աշխարհի քաղաքական-տարածքային բաժանումը: Դրա հետ մեկտեղ սկսվում էր բաժանված տարածքների վերաբաժանումը:

Եվրոպայի քաղաքական քարտեզն էական փոփոխության ենթարկվեց 1648 թ. Վեստֆալյան հաշտությունից հետո: Այդ քարտեզը քանակական և որակական նոր փոփոխության ենթարկվեց XIX դարի ընթացքում՝ Նապոլեոնի արշավանքների արդյունքում: Ֆրանսիային միացվեցին Բելգիան, Հոլանդիան, Գերմանիայի մի մասը, Ռուսաստանն ընդարձակեց իր տարածքները դեպի Արևելք:

XIX դարի սկզբից սկսվեց Լատինական Ամերիկայի անկախացումը և ազատագրումը իսպանական ու պորտուգալական գաղութարարներից: Իսպանախոս 18 երկրներից 17-ը անկախություն ստացան XIX դարում: Ոչ ընդարձակ գաղութներ ունեին նաև Անգլիան և Ֆրանսիան: 1867 թ. Ռուսաստանից ԱՄՆ-ին անցան Ալյասկան և Ալեության կղզիներ, որոնց դիմաց Ռուսաստանին վճարվեց 11 մլն ռուբլի ոսկով՝ 7,2 մլն դոլար: